**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

# ՀՐԱՄԱՆ

«09» 02 2026թ. N 09-Ա

ք.Երևան

## ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԱՄՐԱԳՐԵԼՈՒ ԵՎ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 04-Ի N 92-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով և 9.1 հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1148-Ն որոշման 8-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի մարտի 10-ի N 16-Լ հրամանով հաստատված հավելվածի 17-րդ կետի 4-րդ ենթակետը.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառման, ձևակերպման և վիճակագրության վարման պատասխանատու նշանակել Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ Ռուզան Գրիգորի Հարությունյանին (հասցե՝ ք. Երևան, Արաբկիր, Գյուլբենկյան փ., 23 շ., 20 բն., հեռախոս՝ 010 54-03-26, էլ. փոստ՝ azdarar@scws.am):

2. Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառման, ձևակերպման և վիճակագրության վարման պատասխանատու անձի համար սահմանել հետևյալ լրացուցիչ գործառույթները.

1) Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և ձևակերպումը:

2) Ազդարարման հաղորդումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը Ջրային կոմիտեի նախագահին կամ գլխավոր քարտուղարին, իսկ դրանցում կոռուպցիոն բնույթի դեպքեր պարունակելու դեպքում, նաև՝ Ջրային կոմիտեի հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուին:

3) Վարել, իրավական ակտերով սահմանված, ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառման և ձևակերպման էլեկտրոնային կամ թղթային (ըստ նպատակահարմարության) գրանցամատյանը:

4) Ազդարարման հաղորդումների առնչությամբ ձեռնարկել իրավական ակտերով սահմանված պաշտպանության միջոցառումներ, որի արդյունքների մասին զեկուցել վերադասության կարգով: Ազդարարը, պետական կառավարման համակարգի մարմին հանդիսանալու դեպքում, ծանուցել ձեռնարկված միջոցառումների մասին:

5) Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարումը, վերլուծումը, ներկայացումը և հրապարակումը:

3. Ջրային կոմիտեի պաշտոնական կայքը սպասարկող պաշտոնատար անձին՝ հրամանն ընդունվելուց հետո եռօրյա ժամկետում սույն հրամանով նշանակված պատասխանատու անձի կոնտակտային տվյալները տեղադրել Ջրային կոմիտեի պաշտոնական կայքի գլխավոր էջում:

4. Ուժը կորցրած ճանաչել Ջրային կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 4-ի N 92-Ա հրամանը:

5. Հրամանն ուժի մեջ է մտնում իրազեկմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: GHALAMKARYAN ARAMAZD 4105740253

ԱՐԱՄԱԶԴ ՂԱԼԱՄՔԱՐՅԱՆ